

ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄԸ, կանխասացված Տիրամոր կողմից
Գարաբանդալում 1961 թվականին, տեղի կունենա շուտով, որ փրկի աշխարհը:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ

Նոր մարգարեությունները, որոնք ստանում է Եվրոպայում մի տեսանողուհի,
բացահայտում են գլոբալ իրադարձություններ, որոնք առաջնորդում են դեպի Երկրորդ
Գալուստը:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ՈՐՊԵՍՁԻ

- ապացուցի բոլորին, որ Աստված գոյություն ունի,
- ետ բերի յուրաքանչյուրին դեպի Հիսուսը և ճշմարտության ճանապարհը,
- նվազեցնի մեղքի և չարիքի ազդեցությունն աշխարհում ապաշխարության
միջոցով,
- օգնի մեզ փրկվել նախքան վերջնական դատաստանի օրը՝ տալով մեզ
հնարավորություն, որ թողություն խնդրենք մեր գործած մեղքերի համար,
- դարձի բերի չհավատացողներին, ովքեր փրկության հնարավորություն չէին
ունենա առանց զթասրտության այս մեծ գործողության,
- հզորացնի հավատացողների հավատքը:

ԻՆՉ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

- 7 տարեկանից բարձր յուրաքանչյուր ոք կունենա անձնապես խորհրդավոր
հանդիպման փորձառություն Հիսուս Քրիստոսի հետ, որը կտևի մինչև 15 րոպե:
- Սա մի ընծա է Հայր Աստծո կողմից՝ դարձի բերելու համար մարդկանց դեպի
ճշմարտությունը: Դա այն է, ինչ տեղի կունենա Վերջին Դատաստանի Օրը, միայն
թե այս անգամ դուք չեք դատապարտվի: Դրա փոխարեն ձեզ հնարավորություն
կտրվի թողություն խնդրել:
- Երկու գիսաստղ կբախվեն երկնքում:
- Մարդիկ կկարծեն, թե դա աղետաբեր կլինի, երկրաշարժից էլ վատ: Բայց դա
այդպես չէ – դա մի նշան է, որ Հիսուսը եկել է:
- Երկինքը կարմիր կդառնա: Այն նման կլինի կրակի, իսկ հետո երկնքում կտեսնեք
մի մեծ խաչ՝ ձեզ նախապատրաստելու համար:
- Աթեիստները կասեն, որ դա գլոբալ պատրանք (իլյուզիա) էր: Գիտնականները
կփնտրեն տրամաբանական բացատրություն, բայց ոչ մի բացատրություն չի լինի:
- Այն կլինի տպավորիչ, սակայն չի վնասի մեզ, քանի որ դա գալիս է որպես Միքո և
Գթասրտության գործողություն Հիսուսի կողմից:
- Մեր մեղքերը ցույց կտրվեն մեզ, և մեզ հսկայական վիշտ և ամոթ կպատճառի, երբ
դրանք բացահայտվեն մեզ: Ոմանք այնքան վատ կզգան և շոկի մեջ կընկնեն այն
բանից, թե ինչ ձևով են իրենց մեղքերը բացահայտվում իրենց, որ մեռած կընկնեն
նախքան կհասցնեն թողություն խնդրել:

- Յուրաքանչյուր ոք կտեսնի Աստծո առջև իր հոգու վիճակը – այն բարին, որն արել են իրենց կյանքի ընթացքում, այն վիշտը, որը պատճառել են ուրիշներին, և այն ամենն, ինչ չեն արել:
- Շատերը ծնկի կգան և կլացնեն թեթևացման արցունքներով: Ուրախության և երջանկության արցունքներով: Զարմանքի և սիրո արցունքներով:
- Քանի որ վերջապես դրանից հետո հնարավոր կլինի ապրել մի նոր կյանքով, երբ կիմանանք ամբողջ ճշմարտությունը:
- Հիսուսը հիմա խնդրում է յուրաքանչյուրին, որ աղոթեն այն հոգիների համար, ովքեր կմահանան շոկից մահացու մեղքի մեջ: Այժմ բոլորը նախապատրաստվելու կարիք ունեն: Հիսուսը խնդրում է, որ բոլորն իրենց մեղքերի համար թողություն խնդրեն նախքան Նախագգուշացումը:

Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք հետևյալ ինտերնետային կայքը.

<https://fatherofloveandmercy.wordpress.com/author/fatherofloveandmercy/>

կամ

<http://thebookoftruthonline.blogspot.am/p/about.html>

կամ

theremnantarmy.info

www.TheWarningSecondComing.com